

ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ

Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

* Խեղճ հիւանդին մէկը ատենով գանգատ ըրեր է բժշկին՝ թէ սչ ոտքի վրայ կենալ կրնամ, ոչ նստիլ եւ ոչ պառկիլ: Բժիշկը անգուժ եւ կոպիտ մարդ մը լինելով՝ պատասխան կուտայ հիւանդին թէ «Ուրեմն կախուէ որ խալիս»:

— Արդեօք այն բժշկէն աւելի կոպիտ եւ անգուժ չեն այն մարդիկը որ ազգին խեղճութիւնները լրած կամ տեսած ատեննին կըսեն շատ անգամ՝ թէ մեր ազգէն իւր չըկայ, կորսուած ազգ է:

* Մարդուն մէկուն որդին արձակուրդի ժամանակ համալսարանէն տուն կգառնայ: Հայրը չկշտանար մէկուն մէկալին առջեւը որդւոյն գովասանքը ընելէն: Լսողներէն մէկը պատասխան կուտայ թէ իմ որդիս աւելի ալ զարմանալի է ու մեծ վկայագրով ելեր է համալսարանէն: Այս որ կըսէ առաջինը, կուշտ մը կծիծաղի ու կըսէ. «Այդ ալ բան է. իմ որդիս քննութեան ատեն այնպէս լաւ պատասխաններ է որ բոլոր վարժապետները պարտաւորեր են զինքը գալ տարի նորէն քննութենէ անցնելու:

— Յայտնի է որ այս պատմութիւնը մեր ազգին պատանեաց եւ ծնողաց վրայ չէ. բայց արդեօք ինչեր կըսուին մերազնեայց տները, երբ իրենց որդիքը արձակուրդի ժամանակ կամ թէ ուսման ընթացքը աւարտելէն վերջը տուն կգառնան . . . :

* Գեղի մը վարժապետը որդի մը ունի եղեր շատ կրակոտ, որ ամենեւին բան սովրե-

լու միտք չունի: Հօրը բարեկամներէն մէկը կհարցընէ տղուն. «Մի՞թէ, կըսէ, ամենեւին կարգաւ սովրիլ չես ուղեր: — Ոչ, կպատասխանէ տղան: — Ուրեմն եթէ ամենեւին բան չսովրիս, քու վերջդ ի՞նչ պիտի լինի» կըսէ մարդը: Տղան իսկոյն վրայ կըբերէ թէ «Վարժապետ կլինիմ եւ տղաք կկարգացընեմ»:

— Այս պատմութեան բարոյականը մեղք որ շատ յայտնի է ընթերցողաց:

* Աստղաբաշխին մէկը գիսաւորի մը շըրջանը հաշուելու զբաղած է եղեր: Կուգան կիւմացընեն իրեն թէ «Մարդ եկաւ՝ հետդ տեսնուելու»: Կպատասխանէ թէ «Այժմ ատեն չունիմ, ըսէք որ յետոյ թող հրամմէ»: Կըհարցընէ ծառան թէ «Ե՞րբ թող գայ նորէն»: Աստղաբաշխը՝ խելքը իրեն գիսաւորին տուած՝ կպատասխանէ. «22 տարիէն եւ 3 ամսէն»:

— Գործի տէր մարդկանց մօտ գնացող հիւրը պէտք է աղէկ ընտրէ իւր ժամանակը, որ գիսաւորի տեղ չգրուի:

* Ատենով Հրեայ երիտասարդ մը զինուորութեան կգրեն: Խեղճ Հրեան տեսնելով որ պատճառ մը չունի զինուորագրութենէն ազատելու, կըսէ այն տեղ գանուող գնդապետին. «Հաւատն, տէր իմ, որ ես ամենեւին յարմարութիւն չունիմ զինուոր լինելու. վասն զի տղայութեանս ատենէն սովրեցեր եմ ինծի չուան ոլորել, եւ ես այն ժա-

մանակէն ոչ երբէք կրնամ առաջ երթալ, այլ միշտ ետ ետ է գնացածս»:

— Յետախաղաց մարդկանց եւ ժողովրդոց ալ կարելի է հարցընել թէ արդեօք իրենք ի մանկութենէ ինչ արհեստի տէր են եղած:

* Կատարինէ կայսրուհին օր մը իւր թռուին, այսինքն Աղեքսանդր Փաւլովիչ մանկահասակ մեծ իշխանին հետ խօսակցութիւնը բաժ ժամանակը՝ կհարցընէ անոր թէ «Պատմութեան մէջ ո՞ր կտորը ամենէն ա-

ւելի անուշ կուգայ քեզի»: Աղեքսանդր պատասխան կուտայ թէ «Հենրիկոս Դ-ին ըրածը, որ Փարիզը պաշարած ժամանակը՝ պաշարելոց հաց կյուղարկէ»: Այս խօսքին վրայ կայսրուհին ցնծալով կհամբուրէ իւր թռունու կըսէ. «Դուն քու հպատակացդ հայր պիտի լինիս». ինչպէս որ իրօք եղաւ յետոյ Աղեքսանդր:

— Ահա այս կերպով պէտք է ծնողք եւ վարժապետք լաւ դիտեն թէ տղայոց վրայ պատմութեան ո՞ր կտորները աւելի տպաւորութիւն կընեն, եւ ըստ այնմ գուշակեն հասկընան կամ շտկեն նոցա բնաւորութիւնը:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

ՃԱՆՃԵՐԸ ԶԱՐԴԵԼՈՒ ՀՆԱՐՔՆԵՐ.

Ճանճերուն ամառ ատեն տուած նեղութենէն ազատելու հնարքներ շատ կան. անոնցմէ մէկ քանին այս տեղս դնեմք.

Ա. Քուսասիս ըսուած փայտք եփէ, անոր ջուրը (որ մարդկանց ամենեւին վնաս չունի, բայց ճանճերուն դէմ զօրաւոր թոյն է) տափակ ամաններու մէջ լից ու սենեկին մէջ ասդիս անդին շարէ: Ամաններուն մէջ ծծուն թուղթ ալ դիր այնպէս որ բոլորովին թաց լինի, իսկ անոնց շրթունքին վրայ քիչ մը շաքար ցանէ որ ճանճերը խաբուին ու այն ջուրը խմելու գան. խմողները իսկոյն կջարդուին:

Բ. Դղումին (խապրիսին) ջուր տերեւները ծխէ սենեկին մէջ, ճանճերը իսկոյն կմեռնին՝ թէ որ սենեկին դուռն ու պատուհանները փակ են. իսկ եթէ պատուհանները բաց են, կփախչին կերթան:

Գ. Կաթին մէջ տաքդեղ եփէ դիր, ճանճերը խմածներուն պէս կջարդուին:

Դ. Ապակիէ չափաւոր մեծութեամբ աման (պակֆա) մը առ, մէջը սապոնի ջուր լից՝ մինչեւ ամանին բերնին մօտիկ, բայց այնպէս որ ջրին երեսը փրփուր չգտնուի. յետոյ կտոր մը տունի հաց առ, մէկ երեսը մեղր քսէ, այն մեղրոտ երեսը դէպ ի վար դըրած՝ անով պանքային բերանը ամուր փակէ, հացին ալ մէջտեղէն ծակ մը բաց՝ ձկոյթ (պլիկ) մատի հաստութեամբ: Ծակաչք ճանճերը մեղրին համը առածներուն պէս՝ ետեւէ ետեւ այն ծակէն ներս կմտնեն՝ մէկզմէկ կօխկըտելով. ծակին վարի բերանը գտնուողները ջուրը կթափին, կամ թէ ներս մտածները դուրս ելնելու ճարը չեն գտներ, կընկնին ջրին մէջ ու կխղդուին:

Մաքրութեան համար պէտք է ամէն օր ամանին ջուրը փոխել, երկու երեք օրն ալ անգամ մը հացին երեսը նորէն մեղրուտել: